ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2023 թվականի N 524-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 486-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 2200-Ն որոշումը՝

որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2023 թվականի նոյեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի սեպտեմբեր ամսին տեղահանված և Սյունիքի մարզի Կապան համայնքում բնակություն հաստատած ընտանիքների համար «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության Կապանի մասնաճյուղից վառելափայտ ձեռք բերելու նպատակով գումար հատկացնելու մասին» N 486-Ա որոշման 1-ին կետում «սեպտեմբերի 28-ի N 1657-Ն» բառը և թվերը փոխարինել «դեկտեմբերի 14-ի N 2200-Ն» բառով և թվերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. դեկտեմբերի 25
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290